

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-ճապոնական պատերազմը:—Գորհայի ներքին բեֆորմների հարցը.—
Միացեալ Նահանգները Հեռաւոր Արեւելիում՝ Պանամեան ջրանցիլ փոքելուց
շեռոյ:—Տիրիքի արշաւանքը:—Գերմանացիները հարաւ-արեւմտեան Աֆրիկա-
յում:—Գոմբի օրինագիծը՝ միաբանութիւնների անդամներին դասաւանդելն
արգելելու մասին:—Փրանսիացի ազատամիտների կոնտրահոնքները Փրան-
սիայից դուրս:—Մակեդոնական բեֆորմների ձգձգումը:—Առաջնորդական
ընտրութիւնը Աստղաօսականում:

Մօտ երկու ամիս է արդէն որ տեւում է ռուս-ճապոնական
պատերազմը. ռուսաց թերթերում տպուած պաշտօնական հե-
ռագրներինց գիտենք, որ մինչև այժմ ճապոնացիները 6 անգամ
յարձակում են գործել Պորտ-Արտուրի վրայ և մի անգամ ում-
բակոծել են Վլադիվոստոկը, սակայն միակ շօշափելի հետևան-
քը այն է եղել, որ ճապոնացիները կարողացել են անվտանգ Կո-
բէյի ափը իջեցնել իրանց զօրաբանակը: Նոյն հեռագրներից
գիտենք, որ տիրելով ամբողջ Կորէային՝ նրանք կամաց-կամաց
մօտենում են Մանջուրիայի և Կորէայի սահմանագիծ Նալու
գետին, որի բերանում գտնւում է Լչժիւ քաղաքը: Այդ ուղղու-
թեամբ ընթանալիս ճապոնացիները ունեցել են երկու ընդհա-
րումներ ռուս զօրքի խուզարկու խմբերի հետ—փետրուարի 15-ին
Պենեանի մօտ, իսկ մարտի 15-ին Չոնժիւի մօտ, որից մին-
չև Լչժիւ մերձաւորապէս 80 վերստ է: Նոյն հեռագրներից երե-
ւում է, որ ճապոնացիները մտադրութիւն ունեն ափ իջնել նաև
Լիաոտոունգեան թերակղզու արևմտեան ծովածոցում, որի մէջ
հրախից թափւում է Մանջուրիայի Լեաօ գետը՝ իր բերանում
ոռնենալով Նիւչուան կամ Ինկուու քաղաքը: Հեռագիրը (մարտի
17-ին) արդէն հաղորդեց, որ ռուսները Նիւչուանը պատերազ-
մական դրութեան մէջ են յայտարարել:

Մեր անցեալ տեսութեան մէջ մենք առաջ էինք բերել
ճապոն-կորէական դաշնագրի բովանդակութիւնը: Կորէան ար-
դէն սկսել է շրջապատել ադմինիստրատիւ բեֆորմների վերա-
բերեալ ճապոնական կառավարութեան ցուցմունքները և խոր-

հուրդները: Այդ երկու ցեղակից և կրօնակից երկրների մէջ տեղի ունեցած կապը ամրապնդելու համար Մէուլ գնաց ճապոնական յայտնի պետական գործիչ մարկիզ Իտօն, որին արքայավայել ընդունելութիւն ցոյց տրուեց:

Կորէական կայսրը երկու անգամ ունկնդրութեան արժանացրեց մարկիզ Իտօն և նրան շնորհեց կորէական ամենաբարձր՝ «փառքի ծաղիկ» կոչուած շքանշանը: Մարկիզը խորհուրդ է տուել կայսրին աստիճանաբար մտցնել իր երկրում բեֆորմներ. Ճապոնիան խոստանում է Կորէային ամենաձեռնտու պայմաններով 5 միլլ. իեն (ըուրլի). Կորէան պէտք է հրաւիրի ճապոնացի խորհրդատու պաշտօնեաներ, որոնք կ'օգնեն մտցնելու այդ բեֆորմները: Իտօն մտադիր է կորէական պարլամենտ ստեղծել ճապոնականի օրինակով: Նա խորհուրդ է տալիս նախկառաջ բարձրացնել ժողովրդի կրթութեան մակերևոյթը, որովհետեւ դրա շնորհիւ միայն կը փոխուեն կորէական կեանքի ընդհանուր պայմանները: Ռուսաց լրագրներում տպուած հեռագրից իմանում ենք, որ «մարտի 9-ին Մէուլում, արտաքին գործոց մինիստրութեան մէջ ի պատիւ իրան կազմուած ճաշի ժամանակ մարկիզը մի ճառ է արտասանել, որ խոր տպաւորութիւն է թողել կորէացիների վրայ: Նա պատմել է, թէ ինչպէս է Ճապոնիան քայլադրայլ ազատուել արևելեան ոգուց, առաջարկել է կորէացիներին օգտուել Ճապոնիայի դժուարութեամբ ձեռք բերած փորձից և խորհուրդ է տուել նրանց մեկուսացած չմնալ և գործել յօգուտ երկրի: Եթէ նրանք վարուեն համաձայն այդ խորհրդի, նրանք կը պահպանեն իրանց անկախութիւնը, որ հակառակ դէպքում անխուսափելիօրէն կը խլուի նրանցից այժմ Կորէայի հողի վրայ կուռղ տէրութիւններից մէկի ձեռքով»:

Եւրոպան և Ամերիկան կամաց-կամաց սկսում են հաւատալ, որ կ'աջողուի ոռոս-ճապոնական կռիւը կղզիացնել և դարձնել լոկ երկու ախոյեանների մենամարտ: Միևնորոշ ժամանակ շարունակում են յավնայն դէպս պատրաստութիւններ տեսնել ապագայ յանկարծակի բարդութիւնների համար և առանձին փութկոտութեամբ վերջացնում են այն խնդիրները, որոնք այսպէս թէ այնպէս կապ ունեն չեռաւոր Արևելքի հետ: Այսպէս՝ Ամերիկայի Միաց. Նահ. սենատը հաստատեց Պանաման ջրանցքի փորելու պայմանագիրը: Անշուշտ եռանդուն և հարուստ եանկիները շատ շուտով գլուխ կը բերեն այդ վիթխարի ձեռնարկութիւնը և միացնելով Ատլանտեան ովկիանոսը Պաղաղ ովկիանոսի հետ՝ մօտ ապագայում աւելի ևս շահագրգռուած

կը լինեն Հեռաւոր Արեւելի հարցերով, որովհետեւ այն ժամանակ կարճ և էփան հաղորդակցութիւն կ'ունենան Չինաստանի և Կորէայի հետ նաեւ Միացեալ Նահանգների արեւելեան և հարաւային նահանգները իրանց զարգացած առևտրով և արդիւնադրժութիւնով:

Հեռաւոր Արեւելի գործերում շահագրգռուած Անգլիան էլ մի կողմից ամեն կերպ աշխատում է Եւրոպայում ամրապնդել իր բարեկամութիւնը Ֆրանսիայի հետ և ընդարձակել միջնորդ դատարանի հարցը՝ կնքելով Ֆրանսիայի և Իտալիայի հետ կապած պայմանագրերն յար և նմանը նաեւ Սպանիայի հետ (փետ. 14-ին), իսկ միւս կողմից՝ զգուշութեամբ առաջ խաղալով դէպի դալայ-լամայի, այդ բուդդայական պապի Հռոմը—Լիսապոն: Տիրէթի արշաւանքի առիթով լորդերի պալատում արուած հարցադնդումներին կառավարութեան կողմից պատասխանեց Հնդկաստանի գործերի մինիստրութեան գլխաւոր քարտուղար լորդ Հարդլիգը, որ յայտնեց մօտաւորապէս հետեւեալը. բրիտանական կառավարութիւնը ամեն ջանք գործ դրեց խաղաղ բանակցութիւնների ճանապարհով կարգաւորել Տիրէթի և բրիտանական հողերի մէջ սահմանագծային հարցը, սակայն նպատակին չհասաւ: Վերջին ժամանակներս տիրէթցիք սկսեցին խրոխտանալ, որ նրանք Անգլիայից չեն վախենում՝ իրանց զօրովիք ունենալով Ռուսաստանին: Անգլիան չէր կարող այդ տանել և վճռեց պնդել սահմանագծի հարցի վերջնական որոշման մասին: Ուղարկելով զնդապետ Ունդեոսէնդին զօրախմբով Տիրէթ՝ բրիտանական կառավարութիւնը յոյս ունի, որ ինքը դալայ-լաման կ'ընդունի այդ միասիայի խաղաղ բնաւորութիւնը: Իսկ լորդ Լանսդօունը աւելացրեց որ կառավարութիւնը միանգամայն ընդունում է Տիրէթի անկախութիւնը, սակայն նա միևնոյն ժամանակ կարծում է, որ եթէ որեւէ պետութիւն իրաւունք ունի այդ երկրում գերակշռող ազգեցութիւն ունենալու, այդ Տիրէթի սահմանակից Մեծ Բրիտանիան է: Որովհետեւ Տիրէթը դիպլոմատիական յարաբերութիւնների մէջ էր մտել Ռուսաստանի հետ, ուստի անհրաժեշտ էր մի բան ձեռնարկել, որպէսզի համոզել դալայ-լամային, որ Անգլիան չի հրաժարուել իր իրաւունքներից:

Բրոդբրիկ մարտի 15-ին համայնքների ժողովում յայտնեց, որ տիրէթեան արշաւախմբին հրամայուած է մուտք գործել մինչև Շան-ցէ: Կնդապետ Իւնդեոսէնդը լիազօրութիւն է ստացել զէնքի դիմելու միայն այն դէպքում, եթէ տեղացիները փորձեն կանգնեցնել արշաւախմբի առաջխաղացումը, և եթէ առանձին-առանձին զօրախմբերի յարաբերութիւններին վտանգ

կը սպառնայ: Իճագետքէնդի յետեից գնում է գեներալ Մակ-դոնալդը, որ Տանդլլա անցքում է գտնուում այժմ:

Ճապոնիայի դէմ հասարակական կարծիքը գրգռելու դիտաւորութեամբ գերմանացիներն էին, կարծեմ, առաջին անգամ, որ ստեղծեցին «դեղին վտանգ»-ի ուրուականը: Այդ գերմանացի ինկներները առհասարակ շատ բարձրից են նայում իրանց գոյնից տարբեր գոյն ունեցող մարդկանց և ցեղերի վրայ: Նիցշէի «Ուարտեաշ գազան»-ի (blonde Bestie) գովքը շատ է դուր եկել այդ գերմարդկանց» և դրանք բառացի կերպով գազանութիւններ են թոյլ տալիս իրանց, փառք Աստծոյ, սակաւթիւ գաղութների լտեղացիներին յանկատմամբ: Բիսմարկի ազգակիցներն իրանց տմարդի, կամայական վայրագութեամբ դէպի սեամորթները հարաւ-արեւմտեան Աֆրիկայում դրանց մտնելու են վերջապէս ապստամբուել այդ սպիտակամորթ նեղիչների դէմ: Անկասկած Կրուպպի թնդանօթների դէմ անգոր են այդ խեղճ ու կրակ սև մարդուկները, և «արեան ու երկաթի» մարդիկ իրանց «զինուած բռունցքով» շատ շուտով կը խեղդեն մարդկային իրաւունքներ պահանջող այդ «ստոր ցեղի» արարածներին: Եւ այդպիսի երեւելի «կուլտուրեզներներ»-ը համարձակութիւն ունեն քննադատել անգլիական գաղութային քաղաքականութիւնը... մինչդեռ ոչ միայն Գերմանիան, այլև ամէլի մեղմ Ֆրանսիան պէտք է խոստովանուն, որ գաղութներ հիմնելու և կառավարելու գործում դրանք ուղղակի անընդունակ են՝ համեմատած «նենգ Ալբիոնի» զաւակների հետ:

Թէ ինչ անարդար չափերի են ընդունակ և Ֆրանսիացիները, երբ հարցը գալիս է ոչ Ֆրանսիացիներին, այդ երևում է, իմիջի այլոց, դրանց նոյնիսկ արմատական գործիչների վերաբերմունքից դէպի կղերական հարցը: Նորերս, երբ Ֆրանսիական պարլամենտը ընդունեց ձայների խոշոր մեծամասնութեամբ (87 ձ.) Կոմբի օրինագիծը, որով արգելւում է առանց բացառութեան բոլոր թէ թոյլ տրուած և թէ արգելուած միաբանութիւնների անդամներին մանկավարժական գործունէութիւնը, — մի բացառութիւն արուեց պարլամենտի կողմից. Ֆրանսիական գաղութներում թոյլ է տրուում, որ նոյն գործունէութեամբ պարապեն մայր երկրում ֆնասակար ճանաչուած և հաւածուած կղերականները, դպրոցներ շինեն և այլն: Թէև Մադագասկար կղզու գեներալ-նահանգապետ Գալլիէնի տեղեկութիւնների հիման վրայ՝ միաբանութիւնների բացած դպրոցները գաղութներում նոյնքան ֆնասակար են, որքան մայր-երկրում, սակայն Ֆրանսիական ազգի ներկայացուցիչների համար համոզեցուցիչ էր այդ, որովհետև արտաքին քաղաքականութեան

լողիկան այլ է: Այդ բանը մի քանի տարի առաջ մենք տեսանք նաև Թիւրքիայում եղուիտներին ցոյց տրուած ֆրանսիական հովանաւորութեան մէջ...

Առհասարակ արմատական եւրոպական գործիչներն անգամ, երբ հարցը գալիս է արտաքին քաղաքականութեան, միշտ որոշ կոմպրոմիսներ են անում իրանց խղճի և համոզմունքի հետ: Եթէ այդ այդպէս չլինէր, Մերձաւոր Արեւելքում շատ թշուառութիւններ և ոճիրներ վաղուց վերացուած կը լինէին:

Սուլթանը, Մերձաւոր Արեւելքի այդ իշխողը, շարունակում է ձգձգել մակեդոնական բեֆորմների խնդիրը: Դեռ ևս ժանդարմերիայի վերակազմութեան հարցն էնրա երկար ու բարակ բանակցութիւնների առարկան: Երբ կը սպառուեն բոլոր հնարները, և ժանդարմերիայի հարցը մի կերպ կը շտկուի, երևան կը գան նոր-նոր արգելքներ... մինչև որ յարմար առիթ լինի կոտորածներ առաջացնելու: Ինչպէս երևում է, արդէն մոռացուած է համարում 300 հազար զոհերի յիշատակը, և Սասունի շուրջը նորանոր չարագուշակ դժբախտութիւններ են կուտակւում:

Մի թէ անգլո-ֆրանս-իտալական մերձեցումն անգամ անգոր է վախեցնել Թիւրքիային և ստիպել նրան, որ նորանոր էկապերիմենտներ չսարքի թշուառ ռայայի գլխին:

— Էջմիածնից «Մշակ»-ին հաղորդում են, որ «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մարտի 6-ին գրած մի կոնդակով յանուն Ատրպատականի թեմի առաջնորդական փոխանորդի և խորհրդարանի, հրամանագրել է շուտով ձեռնարկել թեմական պատգամաւորների ընտրութեան՝ առաջնորդ ընտրելու համար, համաձայն անցեալ տարի հաստատուած թեմական կանոնադրութեան: Այդ առիթով Թաւրիզից հաղորդում են, որ վերոյիշեալ պատգամաւորների ընտրութիւնը կը կայանայ ապրիլին»:

Կը ցանկանայինք, որ Ատրպատականի ժողովուրդն այս անգամ աւելի լուրջ կերպով վերաբերուէր իր առաջ դրած հարցին և նախապատրաստական ժողովներում ամենախիստ և անաչառ քննութեան բովից անցկացնէր առաջնորդական թեկնածուներին, իբրև ուղեցոյց ունենալով միայն, թէ որչափով այս կամ այն անձնաւորութիւնը վարչական ընդունակութիւն ունի ստանձնելու այդ պատասխանատու պաշտօնը: Մանր-մունր կըքերը պէտք է մոռացութեան տրուեն, և արժանաւորագոյնը կոչուի Ատրպատականի թեմի առաջնորդութեան համար: Տակտի, եռանդի և պատրաստութեան կողմից մենք յարմարագոյնը համարում ենք Բազրատ վ. Վարդապետներին:

Լ. Ս.